

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 բուրլի. կէս տարւան 6 բուրլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Маскы».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունուած է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարուած են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻՔՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհանուր գործակցութեամբ. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Վրաց
Թատրոն. Նամակ Խմբագրութեան. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԽՍՈՒՆ
ԼՈՒՐԵՐ. — Մանրանկար. ՀեՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. էջ-
միածին ձեւաւորներ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԱՐ

Մեր հաղորդները, որ մեր երկրի զա-
նազան հիմնարկութիւններին ներկայացու-
ցիւնները կազմված ժողովը վերջնականա-
պէս մշակեց կողմասեան ցուցահանդէսի
ծրագիրը: Այդ ծրագիրը շուտով կուզարկ-
վի երկրագործութեան միջնորդի հաստա-
տութեան:

Կողմասի բարձր իշխանութիւնը համա-
կրուեալով է վերաբերվում ցուցահանդէ-
սի գաղափարին եւ իր կողմից կաշակեց
նորա ազդ իրագործութեան: Նոյնը կան
երկրագործութեան միջնորդութիւնը թէ
նախկին օժանդակութեամբ եւ թէ իր
բազմաթիւ մասնագէտ-պաշտօնականներ
ծակցութեամբ:

Սակայն պաշտօնական այդ հաստատու-
թիւններին պէտք է ձայնակցեն մեր երկ-
րի բազմաթիւ հաստատութիւնները, օ-
րինակ, քաղաքային ինքնավարութիւնները,
բանկային հիմնարկութիւնները, արդիւնա-
գործական ընկերակցութիւնները, յատկա-
նկիւ իրանց կողմից ցուցահանդէսի կազ-
մութեան համար որոշ գումարներ: Կով-
կասեան Դիւղանտեսական ընկերութիւնը
արդէն սկսել է պաշտօնական դիմումներ
անել այդ հաստատութիւններին, վստա-
շիւնով, որ ընդհանուր շահերին վերա-
բերեալ գործը կը գտնէ ընդհանուր գոր-
ծակցութեան պատրաստակամութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷԶՄԻԱՇՆԻ ԶԵՄԱՐԱՆԸ

Շատերը մեղանում յաճախ տրանջում են,
թէ մեր թղթակիցները ոչ մի լաւ բան չեն
հաղորդում, այլ միայն տխուր, ցուալի, սե-
րողութիւններ: Բայց ինչ անեմ, որ այդպիսի
երեւոյթներից է կազմվում մեր վստահեցուցիչ
կեանքի առօրեայ ընթացքը: Ուր որ նայում
ես՝ մի եւ նոյն բանն ես տեսնում. — թէ ինչ-
պէս մենք ինքներս մեր տունն ենք քանդում:
Ահա մի այդպիսի «տեսնանդութեան» մասին
պիտի լինի խօսքս եւ այս անգամ:

Մեծ յոյսեր ենք դնում մեր հոգեւոր ու-
սումնարանների վրա: Որքան լաւ-լաւ բաներ
ենք սպասում գրանցելու: Բայց որքան հիմնա-
ւոր կարող են համարվել մեր այդ յոյսերը:
Բաւական չէ, որ մի հիմնարկութեան անունը
ուսումնարան լինի եւ նպատակը բարի: Բարի
նպատակ ունեցող հիմնարկութիւնը միայն այն
ժամանակ մեզ գործնական, իրական բարե-
ներ կընծայէ, երբ նա կունենայ նաեւ «բարի»
վարիչներ: Խօսքս էլ միայն ձեւաւորման վրա
է, որ գնալով բարեկարգվելու փոխանակ՝ ա-
րագ քայլերով ընթանում է դէպի «կարգա-
լուծում»: Զարմանալի կարգեր են տիրում
այդ ուսումնական հաստատութեան մէջ. եւ
այդ զարմանալի կարգերի չնորհիւ առաջ է
եկել նոյն ուսումնարանում նաեւ մի զարմա-
նալի վիճակ: Շնորհիւ այն ուղղութեան, որին
հետեւում է ձեւաւորման այժմեան տեսուչ Կա-
րապետ վարդապետը, մեծ խանդավառում է ա-
ռաջացել ուսումնական թէ՛ անտեսական եւ
թէ՛ ուսումնական գործերում:

Պատուում են, որ ամառ աշակերտները հա-
ւաքվում են եւ տեսչի հէնց երեսին յայտնում
իրանց անբաւականութիւնը ձեւաւորման ներ-

ձանկալի էր, որ մեր թէ մեծ եւ թէ
զաւառական քաղաքների հասարակութիւ-
նը նայէր առաջիկայ համակովկասեան
ցուցահանդէսի վրա իրեն իր հարազատ
մի գործի վրա եւ օգնէր նորա աջողութեա-
նը իր համակրութեամբ եւ աջակցութեամբ:
Եթէ մենք կարողանանք միահամուռ ոյժով
աջողեցնել մի կատարեալ ցուցահանդէս,
այն ժամանակ համարձակ կարող ենք յու-
սայ, որ ապագայում ընդունակ կը լինենք
աջողեցնել համակովկասեան ցուցահանդէս-
ներ պարբերաբար եւ նրանց վրա նայել
իրեն մի կանոնաւոր գործի վրա:

Իսկ եթէ ցուցահանդէսների իրագոր-
ծութիւնը պէտք է կախված լինի միայն
պաշտօնական վարչութիւնների խոշոր նը-
պասներից, այն ժամանակ ցուցահանդէս-
ներ կազմվել կը դառնայ մի դժուար գործ,
որովհետեւ պետական շրջանները, ունենա-
լով բազմատեսակ հոգեւոր եւ պարտաւո-
րութիւններ, անկարող են միջոցներ տալ մեծ
քանակութեամբ:

Եթէ մենք ընդունում ենք ցուցահանդէս-
ների օգտակարութիւնը, պէտք է սովոր-
եմք հեշտութեամբ նրանց կազմել մեր
երկրի ոյժերի գործակցութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մեզ պէս ծոյլ, անտարբեր հասարակութեան
մէջ հրաշք կը լինէր տեսնել, որ ծաղկում, բար-
գաւաճում են հանրաշահ հիմնարկութիւնները:
«Ծառն իր պտղից է ձանաչում» — ահ շատ
ճիշդ է. եւ եթէ մեր համայնական մեղուի-
թեան համար հարկաւոր են շօշափիւր օրինակ-
ներ, ուրիշ ինչ կարող ենք ցոյց տալ, բացի
մեր անժամանակ պառակտած հիմնարկութիւն-
ները՝ իրանց ծոյլ եւ թուլամորթ գործիչներով,
իրանց երկարատեւ հոգեվարքով: Մենք թող

քիչ վիճակից: Տեսուչը իր «համառ» աշա-
կերտների սիրտը շահած լինելու եւ դէպի ի-
րան գրաւելու համար՝ առաջարկում է նրանց
գրաւոր կերպով ներկայացնել իրանց դատո-
ղութիւնները ուսուցիչների մասին: Բայց ին-
չու միայն ուսուցիչների, չէ՞ որ աշակերտները
գիտութիւն էին յայտնել նախ ձեւաւորման
վարչութեան, այսինքն հէնց իրան՝ տեսչի
միջոց էր աշակերտների բողոքող ուշադրու-
թիւնը կենտրոնացնել մի այնպիսի խնդրի
վրա, որ հեռու է վարչութիւնից: Եւ այդպէս
էլ եղաւ Տեսուչը այդ կերպ կարողացաւ մո-
ռառալ տալ (ի հարկէ մի առժամանակ) աշա-
կերտներին իրանց գիտութիւնը վարչութիւն-
նից: Աշակերտները ներկայացրին իրանց «ամ-
բաստանագիրը» եւ «բողոքագիրը», որտեղ ար-
ձանագրել էին ուսուցիչներից մի քանիսի «ան-
արժան» լինելը եւ «վատ մեթոդով» դասա-
ւանդելը: Ինչ արեց տեսուչը. նա արձակեց
երկու ուսուցչի, որոնց ինքը արդէն առաջուց
որոշել էր արձակել: Դրանցից մէկը վաղուց
էր ուսուցչութիւն անում ձեւաւորման եւ տե-
սուչը սկզբում դրա մասին լաւ կարծիք էր:
Այս տարի էլ այդ ուսուցչին չէր արձակվի,
եթէ «համարձակութիւն» եւ անգիտութիւն
ունեցած չը լինէր մի մասնաւոր, ձեւաւորման
հակառակի տեսչի «բիշմանաւոր» կամքին:

Ուսումնական տարին սկսվում է. աշակերտ-
ները մի նոր «ազդարարութիւն» են ներկայաց-
նում եւ հարցնում, թէ «ինչ եղաւ մեր խնդ-
րի հետեւանքը»: Դժուար է հաւատալ, որ այս
բողոքը մի իրական պատմութիւն է եւ ոչ մի
սարքած հէքիւթ: Բայց ինչ որ մի այլ տեղի
համար անհաւատալի կը լինէր, մեղաւորում ոչ
միայն հաւատալի եւ հարաւոր է, այլ ստոյգ
եւ իրական: Ով չը գիտէ, որ իւրաքանչիւր
մարդավարի զարոցում այսպիսի խնդիրների
«հետեւանքը» այն է լինում, որ իր տեղը, չա-
փը ու սահմանը չը գիտող աշակերտին ար-

հանգիստ քնէ դադարում, կեանքից օգուտ քա-
ղէ ապրողը: Այս առաջուածքը այն ահագին
կենսական իմաստն ունի, որ աշխարհի բարե-
ները դիակների համար չեն, այլ ապրող մարդ-
կանց համար: Հէնց այդ չէ պատճառը, որ մեր
հասարակութիւնը այնքան հիմնաւոր կերպով
գրկված է աշխարհի բարեքերից: Լինել մե-
ռած եւ համարել իրան կենդանի, նոյն իսկ
շատ առողջ — դա մեր ազգային ներկայ մոլո-
րութիւններից մէկն է, եթէ ոչ ամենախոշորը:
Ահա ինչ փաստ է պատմում «Սուրհանդակ»
լրագիրը այս իրողութիւնը հաստատելու հա-
մար:

Իզմիրեանց գրական մրցանակաբաշխու-
թիւնը յառաջիկայ շաբաթ օր տեղի պիտի
ունենար, բայց յանձնաժողովը վերջին պա-
հուն նկատելով որ կտակին մէջ տրամա-
դրութիւն քիչ կայ, որ երկու տարին մի ան-
գամ մը տեղի ունենայ այս մրցանակաբաշխ-
ութիւնը, եւ թէ մինչեւ հիմա 10—15
տարիներէ ի վեր ամէն տարի տեղի ունե-
նալով, աններելի չեղում եւ խոշոր սխալ մը
գործուել է: Որոշել է ասիէ վերջի ալ եր-
կու տարին անգամ մը կատարել, հետեւա-
բար յառաջիկայ տարի Թարգմանչաց տօնին
պիտի կատարուի այս մրցանակաբաշխու-
թիւնը: Շիտակը այս աստիճան խղճատու-
թեան ընկիւղ չը կայ: Ըսել է որ ասիէ վեր-
ջը կտակներու ոչ միայն ոգին, այլ եւ տա-
ռը իսկ պիտի յարգուի, թող միջնորդութիւն
ունենալ անոնք, որոնք կտակներու մասին
գիտողութիւններ կընէին մինչեւ հիմա:

Անընդունակ ու քնաթաթախ գործիչների
համար, իրաւ, մեծ դիւտ է եղել Իզմիրեանի
կտակի այդ տեղը, որի վրա 15 տարի ուշադ-
րութիւնը դարձնող չէ եղել: 15 տարի ոչինչ ան-
յարձարութիւն չէ զգացվել տառը պաշտու-
համար. այժմ միայն բարեկիցութիւնը կամ
աւելի ճիշտ առած, կատարեալ անանկութիւնը
եկաւ հասկանալու, որ պէտք է շատ չը շտապել,
փոխանակ տարին մի անգամ աշխատելու, աւե-
լի լաւ չէ երկու տարին մի անգամ աշխատել:
Այդպէս էլ վճռեցին մեր մեռած գործիչները:

ձակում են ուսումնարանից: Բայց այս դէպ-
քում մեղաւորը աշակերտը չէ, այլ այն ան-
արժան տեսուչը, որի անշնորհ տեսուչ-
ութիւնը այսպիսի անսանձ ամբարտաւանութեան
է հասցնում դպրոցի սաներին:

Ի վերջոյ չենք կարող չափել, թէ եթէ տե-
սուչը ընդունում է, որ աշակերտները իրա-
ւունք ունեն գրաւոր բողոքներ, դատողու-
թիւններ եւ ցանկութիւններ ներկայացնելու,
եթէ տեսուչը նշանակութիւն է տալիս աշա-
կերտների կամքին եւ «վարչական կարգա-
դրութիւններին», այն ժամանակ նախ եւ ա-
ռաջ հէնց ինքը պիտի հրաժարվի իր պաշտո-
նից, որովհետեւ թէ աշակերտները եւ թէ ու-
սանդները ամենից շատ զգուհ են իրանից եւ
իր տեսչութիւնից:

Տօնում են ձեւաւորման տարեդարձը: Տեսուչը
բարձր ամբիւնից հայել է կարգում: Աստուած
հաջիւ համարէ, ցրված, անծրագիր, սակաւա-
նիւթ, կարծես տեսուչը յանդարտաւորեց էր
խօսուել եւ միջին այդ հայել կարող է համա-
րել ձեւաւորման մի ծխական կամ գիւղական
դպրոց չէ, ուրիշն բաւական չէ հաջիւ կարգա-
միայն վաճի միաբանների, մի քանի վաղար-
չապացայինների եւ մի քանի պատահական ձա-
նապարհորդների առաջ, Հարկաւոր է տպագրել
տալ հաջիւ — տեղեկագիրը եւ ուղարկել թէ մեր
միտումը օրդաններին եւ թէ առհասարակ հայ
հասարակութեան անդամներին: Իսկ ձեւաւորման
նոյն իսկ 25-ամեակի տեղեկագիրը չը տպագր-
վեց: Ձեւաւորման տեսուչը պիտի գիտենայ, որ
ով խոյս է տալիս հաշուետուութիւնից, նա տե-
ղիք է տալիս վատ կատարման: Իր բանախօ-
սութեան մէջ տեսուչը ինչեց եւ այն հրամանի
ստեղծում է մի վեհապալի կաթողիկոսը առաջար-
կում էր կարճել աշակերտների թիւը: Տեսչի
բացատրութեամբ, զի հարկէ, վեհապալի, հա-
յոց գիտաբար Հայրիկի նպատակը այն չէ եղել,
որ լաւ աշակերտներին ուսումնարանից հանեն,
այլ որ արձակվին հիւանդները, անընդունակներ-
ը: Սակայն մի բան դարձեալ մնաց անբացատր-

ԱՐԶԱԳԱՆՔՆԵՐ

XXIII

«Մշակի» երէկվայ համարում տպվել «Փաս-
տաբանութիւնը Գանձակում» վերնագրով մի
յոդուած, որի մէջ շօշափվում են երկու հե-
տաքերի հարցեր — փողոցային փաստաբաննե-
րի մասին եւ ոչ փողոցային փաստաբանների
գործակալների մասին:

Փողոցային կամ, ինչպէս մեր ժողովուրդը ա-
սում է, «չուստիկաւոր» փաստաբանների դո-
յութիւնը յօդուածի հեղինակը բացատրում է
միայն ժողովրդի տգիտութեամբ: Այդ բացա-
րութիւնը ճիշդ է անկասկած, բայց միակող-
ման է: Կան եւ երկու ուրիշ պատճառներ,
որոնցից առաջինը փողոցային փաստաբանների
վարձատրութեան է փաստութիւնն է, իսկ միւսը
այն, որ ոչ փողոցային, ոչ «չուստիկաւոր»,
այլ կօշիկաւոր եւ նոյն իսկ ցիլինդրաւոր փա-
տաբանները չեն ներշնչել ժողովրդին անպալ-
ման հաւատ դէպի իրանց բարոյականը:

Ո՞վ է մեղաւոր այդ բանում, ժողովուրդը
թէ իրանք, «չուստիկաւոր» փաստաբանները,
այդ հարցի պատասխանը անուղղակի կերպով
տալիս է ինքը, պ. Սոջայան՝ իր յօդուածի
երկրորդ մասում, ուր խօսում է երդուեալ հա-
ւատարմատարների ու նրանց օգնականների
պահած «գործակալների» մասին եւ ուր շատ
ճիշդ կերպով պնդում է, որ այդ երեսուցի գո-
յութիւն ունի ոչ միայն Գանձակում, այլ եւ
ուրիշ քաղաքներում:

Երբ ժողովուրդը տեսնում է, որ համալսա-
րանական փաստաբաններից շատերն էլ, եթէ ոչ
անմիջապէս, յամենայն դէպս իրանց «գործա-
կալների» միջոցով — «գործակալների», որոնց մե-
ծամասնութիւնը բաղկացած է մութ, կասկա-
ծելի անձնաւորութիւններից — դիմում են ամեն
տեսակ միջոցների գործատէրեր (կիւէնտներ)
ճարելու համար, զարմանալի է միթէ, որ նա
սկսում է ջոկել նրանց միմիայն այն տեսակէ-
տով, ինչ տեսակէտով ջոկում են մագաղկը
հասարակ մանրավաճառի խանութից — երբ

ված, թէ ինչ կարիք կար մի այդպիսի յատուկ
հրամանի, քանի որ առանց այն էլ իւրաքան-
չիւր տարի արձակվում են ձեւաւորման թղթերը
եւ հիւանդները: Չը լինի թէ այդ հրամանը մի
«ազդարարում» էր հէնց իր տեսչի հասցեով:
Յամենայն դէպս, կարող ենք հանգստացնել
տեսչի տատանվող միտքը եւ ասել, որ եթէ
ինքը չը գիտէ, բայց մենք գիտենք, եւ աշխար-
հիս երեսին չը կայ մի հայ, որ կասկած տանէ
ներկայ կաթողիկոսի գլխաւորութեան մասին:
Միթէ այդ գլխաւորութիւնը, անասան ներո-
ղամտութիւնը չէ պատճառ, որ տեսուչը — Կա-
րապետ վարդապետը մինչեւ օրս միտում է իր
պատմութիւն մէջ, որ ուսումնական տարվայ կիսա-
նագործ, անոռձիկ, կրիտիքական վիճակում
գտնվող մարդուն տեսչի օգնական է թող տա-
լիս լինել, ի հարկէ, միմիայն ոռձիկ ստանալու
համար: Բայց որ իրօք կարիք չը կար մի յա-
տուկ հրաման ուղարկել աշակերտների թիւը
պակասեցնելու համար, այդ մի յայտնի բան է,
որովհետեւ ինքը, տեսուչը, իր սրբազան
պարտքն էր համարում «միահեծան իշխանու-
թեամբ» արձակել տասնեակ աշակերտներ: Ա-
սում են, թէ այս տարի էլ նա ուղղում էր նոյն
կերպ գործել, բայց մանկավարժական խոր-
հուրդը վերջապէս որոշեց սանձադրել նորա այդ
«եռանդը»:

Նոր աշակերտներ այս տարի ընդունվել են
մօտ 40 հոգի, իսկ անցեալ տարի, նոյն տեսչի
վկայութեամբ, մօտ 70... Առաջադիւմում ենք,
այնպէս չէ: Սրա պատճառը այն է եղել, որ,
ինչպէս Արարատում յայտարարված էր, այս
տարի նորեկների ընդունելութիւնը չը պիտի
լինէր:

Տեսչի ձառախօսութիւնը լի էր անվերջ դա-
դախներով ձեւաւորման նիւթական անձկու-
թեան վրա: Զվարթում է, ձեւաւորման քիչ միջոց
ունի: Բայց զարմանալի է, թէ այդ այդպէս
լինելով, ինչու տեսուչը կրկին եւ կրկին ան-
գամ չեղում էր, թէ վաճառք անձուկ միջոցներ
միայն տալով ձեւաւորման մեծ գործ է անում,

անպատճառ է ժամ բան է հարկաւոր, գնում են խանութ եւ միայն երբ այնպիսի բան է անհրաժեշտ, որ չը կայ խանութում, դիմում են մազազինները:

Ժողովուրդը շատ զգայուն է դէպք բարոյական գերազանցութիւնը եւ այն օրը, երբ երգուեալ հաւատարմատարները եւ իրանց օգնականները կանգնած կը լինեն իրանց կոչման բարձրութեան վրա, այն օրը, երբ նրանք կը համոզեն ժողովուրդին, որ իրանք Վսոսք վաճառողներն են, այլ արդարութեան պաշտպաններ, պատրաստ օգնելու ոչ միայն հարուստին, այլ եւ աղքատին, այն օրը, հաւատարմագր եղբայր, կը քանան բոլոր փողոցային փաստաբանները:

Երբ կը գայ այդ օրը, դժուար է որոշել, որովհետեւ շատ խոր են փաստաբանների անկման պատճառները: Անկման ենք առում, որովհետեւ Ռուսաստանի համալսարանական փաստաբանները մի ժամանակ անհամեմատ բարձր էին այժմաններից, թէեւ փաստաբանական դասակարգը երբեք Ռուսաստանում չէ հասել այն բարձրութեան, ինչպէս Ֆրանսիայում, ուր փաստաբաններից դուրս են եկել շատ ազգային պարծանքներ, կամ Անգլիայում, ուր արքայազն իշխաններ պատիւ են համարում ընդունվել փաստաբանների շարքը:

Որո՞նք են այդ պատճառները եւ ինչպէս կարող է բարձրանալ փաստաբանական դասակարգը իր կոչման բարձրութեան, — դրա մասին մենք կը խօսենք մի ուրիշ անգամ: Դրանք այժմ հերթական հարցեր են մեզ համար, որովհետեւ, ինչպէս հաղորդված էր «Մշակի» 205 համարում, Թիֆլիսի երդուեալ հաւատարմատարների ժողովը, գտնելով «գործակալներ» պահելու երեւոյթը անպատշաճ փաստաբանների համար եւ ֆուսակար հասարակական տեսակետից, վճռել է միջոցներ ձեռք առնել նրա դէմ եւ յանձնաժողով է ընտրել այդ միջոցների ծրագիրը մշակելու համար:

Այդ ժողովում, ուր, ղեկավարւոր, Թիֆլիսի մօտ 60 երդուեալ հաւատարմատարներից ներկայ էին միայն 15 հոգի, խօսողների մեծ մասը միայն մի միջոց էր մասնացոյց անում այդ խայտառակ երեւոյթի դէմ կուրսը համար — պատիժ բան չի դուրս գալ: պէտք են, այսպէս ասած, առողջապահական միջոցներ: Այդ միջոցներից մէկը, — երդուեալ հաւատարմատարների եւ նրանց օգնականների խորհրդատու գրասենեակը, — որի վրա մասնացոյց է անում ու պ. ինօլայան, ի նկատի ունի եւ Թիֆլիսի երդուեալ հաւատարմատարների ժողովը, բայց դրա եւ միւս միջոցների մասին մի ուրիշ անգամ:

Առայժմ նկատենք միայն, որ պ. ինօլայան

դժուար բան կատարում: Շատ դժուար եւ ծանր բան է ձեռնարանը վանքի վրէժ: Ո՛չ, դժուար բանը այն տեսակները, կառավարիչները, ծախսարարները եւ մասնապետներն են, որոնք անխիղճ եւ անբեռն կերպով թալանում են իրանց անասութեան եւ կառավարութեանը յանձնվածը: Զարմանալի է եւ այն, թէ այդ ինչպէս է, որ ձեռնարանի միջոցները խիստ սուղ լինելով հանդերձ, հնարաւոր է լինում կէս տարվայ ընթացքում մօտ 1000 ռուբլի «անտեսել» տեսչի պ. օգնականին նպաստ տալու համար, որովհետեւ տեսուչը իրան օգնական հաստատել առաջարկելիս՝ յայտնել էր կաթողիկոսին, թէ դրա համար նոր ծախս եւ ստանալիք վանքի գանձարանից չի պահանջվել, այլ ինքը, տեսուչը, կը «տեսնուի» եւ տեսնուեց, կտրելով աշակերտների հագուստի ծախսից, եւ որպէս նպաստ մատուցեց իր օգնականին: (Պաշտօնապէս դա ետօնիկ) անտեսուցից, բայց որովհետեւ պ. օգնականը, հէնց տեսչի խոստովանութեամբ, ոչինչ չէր անում իր պաշտօնավարութեան ընթացքում, ուստի եւ պաշտօնական ռոճիկը իրօք նպաստ է եղել):

Զարմանալի է, ինչպէս տեսուչը հարկաւոր է համարում աշակերտներին 800 ռուբլու չոր միքը բաժանել բարեկենդանին. 800 ռուբլու միքը, այն էլ չոր միքը, անհասկանալի է... Բայց պաշտօնական հաշուում այդպէս է գրված (այս մասին տեսուչը իր բանաւոր հաշուում ոչինչ չը յիշէ): Զարմանալի է, ինչպէս տեսուչը հարկւրներ է ծախսում ձեռնարանի փողերից վաղարշապատիցներ համար զբօսարան չինելու, որտեղ դեռ եւս ոչ մի վաղարշապատի չէ զբօսնել եւ հազիւ թէ յետոյ էլ զբօսնէ: (Ուրպիսի հոգատարութիւն ապրելիս զեղալիցներ համար. մէկը հարցնող լինի, թէ հայր տեսուչ, քո ինչ գործն է գիւղացիների համար զբօսարան չինել. ձեռնարանը թողած, ինչու եւս փողոցում գործում: Փառք Աստուծու, ձեռնարանում անկիւղ շատ բան ունես, չէ որ մինչեւ

մասամբ սխալվում է, անելով թէ փաստաբանները մեզանում կորստաբեր չեն կազմում: Ճիշտ է, մենք չունենք «երդուեալ հաւատարմատարների խորհուրդներ», ինչպէս Պետերբուրգում եւ Մոսկվայում, բայց վերջին ժամանակներս Թիֆլիսում եւ Բաղուում երդուեալ հաւատարմատարները կազմակերպվել են իրր մի հաւաքական մարմին, մի կորստաբեր, որ ունի ընտրական մշտական յանձնաժողով — ներկայացուցիչ ընդհանուր կամբի: Դա նոյն խորհուրդն է սաղմային դրութեամբ եւ արդէն սկսել է արտայայտել իր բարեբար ազդեցութիւնը համալսարանական փաստաբանների բարձրելու վրա: Ապացոյց դրան թէկու՞ղ հէնց Թիֆլիսի երդուեալ հաւատարմատարների վերոյիշեալ վճիռը, որ անհնար բան կը լինէր առանց այդ կազմակերպութեան: S. Յ.

ՎՐԱՅ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, նոյեմբերի 5-ին, վրաց գերաստանական խումբը տուեց իր երրորդ ներկայացումը: Ուսուցիչները Վիկտորիէն Սարգսի «Patrie» դրաման, բաղկացած 5 գործողութիւնից եւ 7 պատկերից, որ վրացերէն կրում է «Մայրօր» անունը եւ որը փոխադրել է հանգուցեալ Դ. Երիւթով, Ահա 18 տարի է, որ այս պիէսը խաղացվում է վրաց բեմի վրա եւ վրաց հասարակութիւնն էլ սիրում է այն պատճառով, որ տեսնում է իր նախնիներին բեմի վրա եւ պատկերացնում է իր առաջ անցնալը:

Գլխավոր դերերը կատարում էին տիկ. Գարգարեան, պ. պ. Գալիլիէն, Գեղեմիանով եւ Սիմոնիէ: Թատրոն այս անգամ էլ լիքն էր հասարակութեամբ. բայց ափսոս, որ պ. Բեմիսեօրը ուշադրութիւն չէր դարձրել բեմի սարքի վրա: Դրամայի վերջը խաղացին «Ճարտարագիտ» ուրախ վոզովիլը, որը նոր է փոխադրել պ. Գուրիա ուսուցիչներից. այստեղ դուրս է բերած թերում, անկրթ 22 տարեկան երեւտասարդ վրացի, որը ուզում է հարուստ հարսնացու ձգրել, սրան-նրան խաղում է, բայց չէ անդրվում: Վոզովիլը կուշտ ծիծաղ է պատճառում հասարակութեանը, բայց ափսոս, որ երկար է. խաղացողներից աչքի էին ընկնում տ. Գարգարեան եւ պ. Շաթիլով:

Թատրոնը այս անգամ շատ էին տաքացրել, որի շնորհիւ տեղի ունեցաւ մի փոքր խառնակութիւն դահլիճում ներկայացման ժամանակ: Երրորդ գործողութեան միջոցին թատրոնում լսվեց մի ինչ որ ճիչ, հասարակութիւնը կարծեց, թէ հրդէն է եւ բոլորը մի ակնթարթում վեր թռան տեղերից. դերասաններն էլ ընդհատեցին խաղը մի քանի վայրկեան. դահլիճում լսվում էր «հանգստացէ՛ք, նստեցէ՛ք, ոչինչ չը

հիմա գեռ ոչինչ չես չինել»:

Զարմանալի, անհասկանալի եւ կասկածելի են այս անխորհուրդ շտապութիւնները, քանի որ աշակերտները կարգաւոր. գիրք չունեն, որովհետեւ, տեսչի վկայութեամբ, գրադարանի վրա տարեկան ծախսվում է ընդամենը 200 ռուբլի, քանի որ աշակերտների հագուստի մասնաւոր անընտրաբար դրութեան մէջ է (այս մասին տեսուչը ոչինչ չը յայտնեց իր բանախօսութեան մէջ):

Կանոնաւոր կերպով դեռ դասաւանդութիւնը չէ սկսվել: Պատճառը մասամբ տեսչի նախկին օգնականի Թիֆլիսի դործերն էին. այդ դործերը պիտի Թիֆլիսում որոշվէին, որ էլ միայն ձեռնարանում է կանոնաւոր դասեր սկսվելին: Տեսուչն էլ իր կողմից նոր առարկաներ է մտցրել, հնարից վերացրել, դասարանից դասարան փոխել եւ այս բոլորը իր եղակի իշխանութեամբ, թէպէտ կանոնադրութիւնը այլ կերպ է հրամայում եւ մինչեւ այս տեսուչը այդ գործերը ուսուցչական ժողովի իրաւասութեան էին պատկանում: Տեսուչը, որ կարգապահութեան եւ կանոնապահութեան օրինակ պիտի ցոյց տայ, ինքն է խախտում ձեռնարանի կանոնադրութիւնը: Միանշանակութեան քաղաքականութիւնը այն պտուղներից մէկն է, որ մեր եկեղեցուն ընծայեցին վարդապետ-տեսուչները: Միանշանակութիւնը դրանց գոտու մեծամասնութեան ծնունդն է եւ եթէ դրանց այդ ձգտումները չափ ու սահմանով չը սահմանափակեն, — մեծ վտանգների պատճառ կարող են դառնալ դրանք ապագայում մեր առանց այն էլ խեղճ եկեղեցու գլխին: Աշխարհական շատ տեսուչներ ենք ունեցել, աւելի գործունեայ, վստասակաւոր, շնորհալի. ինչու նրանք միշտ յարգել են իրանց պաշտօնակից ուսուցիչների, ժողովների կարծիքը:

Վերջերս տեղի ունեցաւ մի շատ ցաւալի դէպք: Վերակացուներից մէկը մեղադրվեց մի գզուկի յանցանքում: Ուսուցչական ժողովը

կայ». նոյն իսկ բեմից Շահ-Աբրար ուսուցչէ կանչեց «Успокойтесь, господа!» բայց ոչինչ չէր օգնում, մինչեւ չը փակեցին դռները եւ դերասանները բարձր ձայնով չը շարունակեցին իրանց խաղը. բանից երեւաց, որ մի օրիորդ ուշաթափվել էր ածխահոտից, իսկ կողքին նստող հօրաքոյրը, կարծելով թէ մեռել է, սաստիկ ճչացել էր: Ուսուցչը երկրորդ ներկայացման համար խաղաց ժամանակակից սպանիայի դրամատուրգ Լէօպոլդ Կանո-Ռազաի «Ժառանգութեան համար» (Passionosa) 3 գործ. դրաման: Պիէսը թոյլ գրութեամբ է եւ հեղինակը հետեւող է հին չղօյլի. սրա մէջ կան մեղօդրամայի բոլոր յատկութիւնները. պիէսը՝ վրաց հասարակութեանը, որը շատ քիչ էր հաւաքվել թատրոնում, դուր չեկաւ:

Thaleia

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոյեմբերի 7-ին
Զուգահեռով հնար անձամբ յայտնելու իմ շնորհակալութեան գրագրութիւնն այն անձանց, որոնք պատիւ արին ինձ շնորհաւորելու իմ պետական ծառայութեանս յիշատակով, թող տուէք ինձ ձեր պատմական լրագրի միջոցով յայտնել նրանց իմ խորին յարգանաց եւ երախտեաց հաւատարմութեան շնորհով:

Ընդունեցէ՛ք եւ այլն՝ Գ. Սուրբուկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջեան, հոկտեմբերի 26-ին
Առ 10-ն ապրիլի 1900 Գաւառ-Քաթիպայի մահաբանի գումարն էր 2406 ռ. 12 կոպէկ: Ստացանք եղբարք Լալազարեաններից 10 ռ., ուրեմն առ 26-ն հոկտեմբերի մահաբանի գումարը մեզ մօտ կը լինի՝ 2416 ռ. 12 կոպէկ:

Անձա՛ բանաստեղծի յիշատակը յարգողներից պատում ենք նուէրներ — Нахичевань на Дону, Григорію Чалхушьяну.

Գր. Չալխուշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Թիֆլիս քաղաքն ունի բազմաթիւ դպրոցներ, թւով 29, որոնց մէջ ուսանում են մօտ 2000 աշակերտներ: Մինչեւ այժմ դպրոցները չունէին յատուկ բժիշկ, որ հսկէր աշակերտների առողջութեան վրա եւ հարկաւոր դէպքերում օգնէր բժշկական միջոցներով: Այժմ քաղաքային օրհնութիւնը, ցանկանալով ունենալ մի այդ տեսակի բժիշկ, որոնց մշակել բժշկի պաշտօնավարութեան մի հրանանգ եւ ապա հրաւիրել բժիշկ:

Ճանց գործը. հաստատեց, որ, թէեւ բուն յանցագործութիւնը ձեռնարանում չէ եղել կատարված, այլ մի բուրդովին ուրիշ գիւղում եւ սրանից տասը տարի առաջ, բայց այդ վերականգնում մի այնպիսի գզուկի անհաւաքութիւն է եղել, որ այլ եւս մի ժամ անգամ չէ կարելի թողնել նրան ձեռնարանում: Ժողովի անագին մեծամասնութիւնը որոշեց, որ մեղադրեալը ոչ թէ հեռանայ, այլ պաշտօնական կերպով արձակվի իր պաշտօնից: Ժողովի որոշումները ներկայացրին կաթողիկոսին ի հաստատութիւն: Բայց, որովհետեւ բերանացի կերպով ներկայացնող տեսուչն էր, որը պաշտպան հանդիսանալով յանցագործ վերակացուին, մեծամասնութիւնը կողմ չէր, ուստի հասկանալի է, որ կաթողիկոսը հաստատեց փոքրամասնութեան ցանկութիւնը, որ էր եւ իր՝ տեսչի, ցանկութիւնը: Այսպիսով հեռացվեց ձեռնարանից որպէս անպէտք, վնասակար եւ վտանգաւոր այն մարդը, որը տեսչի կատարեալ վստահութիւնն է վայելելիս եղել, որը նոյն տեսչից աւագ վերակացու էր եղել նշանակված:

Եթէ առաջ եղել են, այժմ այլ եւս չը կան պարզամիտներ, որ կարծեն, թէ տեսուչը այդ պատասխանատու պաշտօնը ստանձնել է ձեռնարանին օգուտ բերելու համար, այժմ պարզ է, որ տեսչի նպատակներն են՝ շահախորութիւն եւ փառասիրութիւն: Ո՛չ ոք չը կայ, որ դժգոհ չը լինէր այժման տեսչութիւնից — թէ վնասը, թէ պաշտօնակից ուսուցիչները, թէ ընկերակից վարդապետները... Այսպիսի պայմաններում, կարծում եմ, խոհեմութիւնը պահանջում է յօժարակամ կերպով թողնել պաշտօնը եւ աւարտել բանալ մի աւելի ընդունակի համար: Ինչ օգուտ կարելի է սպասել մի տեսչից, որի վարկը ձեռնարանում հաւասար է մի հասարակ վերակացուի վարկի. ձեռնարանում եղել են վերակացուներ, որոնք աւելի հեղինակութիւն են վայելել, քան այժմեան տեսուչը: Եւ տեսչին ուզում էին, նոյն իսկ վճռել էին փոխել:

Այս օրերս Թիֆլիս վերադարձաւ Ս. Հեղինէ կղզուց իշխան Ն. Մուխրանսկին, որը կամաւոր զինուոր էր գնացել հարաւային Աֆրիկա եւ կուռւմ էր բօջերների հետ անգլիացիների դէմ: Ն. Մուխրանսկի պատերազմի ժամանակ գերի էր ընկել անգլիացիների ձեռքը:

Գրքերի յայտնի հրատարակիչ Պալենկովի կտակալատարները, ինչպէս հեռագրում են կիեվից «Россия» լրագրին, 120 ժողովրդական գրադարան են հիմնում Ռուսաստանի հարաւարեւմտեան նահանգներում:

Վարչապալի դրամատէրերից կազմված մի խումբ հիմնում է կարկուտից փոխադարձաբար ապահովագրելու ընկերութիւն: Մինիստրների կօմիտէն արդէն քննել եւ հաստատել է ընկերութեան կանոնադրութիւնը: Ընկերութիւնը կոչվելու է «Յէրէս»:

Կանանց պաշտպանութեան ուսումնական ընկերութիւնը բաց է անում Պետերբուրգի զանազան մասերում մի քանի ապաստարաններ մայրաքաղաք գնացող օտարաքաղաքացի կանանց համար: Այդ ապաստարաններից մէկը յատկացրած կը լինի ինտելիգենտ կանանց, որտեղ նըրանք ամենաշախտաւոր գնով կարող են ունենալ առանձին սենեակ: Ներկայումս ընկերութիւնը զբաղված է հրապարակական դասախօսութիւններ կազմելով Սոխանոյ-Գորոզովում: Առաջին փորձական դասախօսութիւնը կարգաց յայտնի իրաւաբան եւ հասարակական գործիչ Ա. Կոնի ընկերութեան անդամների եւ բժիշկների նկղ չըջանում:

Վերջնականապէս վճռված է առաջիկայ դեկտեմբեր ամսին Պետերբուրգում միօրական ժողովրդագրութիւն կատարել: Պետերբուրգի լրագրի տեսչի խախտումը, ժողովրդագրութիւնը տեղի է ունենալու դեկտեմբերի 15-ին:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մտադրութիւն ունի հիմնել ամեն մի գաւառի համար տարրական դպրոցների առանձին տեսչի պաշտօն: Այս պաշտօնների համար պահանջվող ծախսը մասամբ պէտք է հոգան գեմատվոնները եւ մասամբ մինիստրութիւնը:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, թէ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը զիտաւորութիւն ունի առանձին մասնակալածական դասընթացներ կազմակերպել, որտեղ օտարաքաղաքացիներ համար հիմնված ուսումնարանների ուսուցիչները կարողանային պատշաճ

այդ պաշտօնը առաջարկել էին մի ուրիշ վարդապետի. բայց սա հրաժարվել էր, պատճառ բերելով իր հիւանդ լինելը: Ճշմարիտ է, այդ վարդապետը տկար է, բայց եւ այսպէս անհամեմատ աւելի անող կերպով կը կարողանար առաջ տանել գործը, եթէ չուզեցար իր վարդապետ-ընկերը «խաթար» պահել եւ ստանձնէր տեսչութիւնը: Վերջապէս, ինչու անպատճառ վարդապետ պիտի լինի ձեռնարանի տեսուչը: Անունն է միայն, թէ վարդապետ տեսուչը ձեռնուռ, էժան է, որովհետեւ աշխարհական հայր տեսչից պակաս ռոճիկ է ստանում: Ի հարկէ, այժմեան տեսուչը ռոճիկ միայն 400 ռուբլի է ստանում, բայց աւելացրէ՛ք դրան ձրի բնակարանը, ուսուցիչը, ընդհանուր վարդապետական ռոճիկը եւ զանազան տեսակի «անտեսութիւններ» եւ այն ժամանակ դուք կը ստանաք ոչ թէ աշխարհական տեսչի 2500 ռուբլին, այլ 3000-ից էլ աւելի: Զուր են կարծուում, թէ վարդապետ մարդը ծախս քիչ կուենանա, որովհետեւ ընտանիք չունի: Վարդապետը հօ հայր, մայր, եղբայրներ, քոյրեր ունի: Է՛հ, դէ եղբայրը պսակվում է, քոյրը մարդու գնում... Ինչպէս կարելի է, որ վարդապետը այսպիսի արտակարգ դէպքի համար իր մտերիմ արեւնակին չը «նպաստէ»:

Լսել ենք, որ յարմարաւոր տեսչացու ի նըրկատի չունենալով, վնասարանում մտադիր են մի յանձնաժողով նշանակել մի քանի ուսուցիչներից միաբան Գալուստ Տէր-Մկրտչեանի նախադաճութեամբ ձեռնարանի տնտեսականի վրա հսկելու համար. իսկ ուսումնական մասը — յանձնելու: Եւ մանկավարժական խորհրդի լրագրը իրաւասութեանը — Այսպէս թէ այնպէս, բայց այժմեան ձեռնարանական խախտում եւ վտանգաւոր բէժիմին պէտք է վերջ դնել:

Եւ մի բան է.

Типографія Грузинск. Т-ва, Большая-Ванская ул., № 27.